

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրութիւն են մշակայն խմբագրատան մէջ.

Մէր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Redaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունւում է ամեն յետեւով

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնելով իր նախկին անգամ

ԵԻԳՐԸՑ ԵԳՕՐՕՎԻԶ ԽՕՍՐՕԵՎԻ

մահական մասին, խնդրում է Թիֆլիսի Քաղաքային Դատարանի պ.պ. ձայնաւորներին, ծառայակիցներին եւ հանգուցեալի յիշատակը բոլոր յարգել ցանկացողներին շնորհ բերել հոգեհանգստին, որ տեղի է ունենալու այսօր, ներկայ մայիսի 22-ին, ցերեկվայ 12 ժամին, Դատարանի դահլիճում:

1—1

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Ձեռք վար դրած.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մորենք. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լէմանի ափերից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում:

ՁԵՆՔԸ ՎԱՅՐ ԴԻՍԸ

Հեռագիրները հաղորդեցին, որ անգլիացիների եւ բոսնիների մէջ հաշտութիւն կայացաւ եւ մշակված պայմանները ստորագրվեցին երկու կողմի ներկայացուցիչների կողմից: Տրանսպալանային եւ Օրանս-Ժան հանրապետութիւնները ձանաչվեցին իբրեւ անգլիական պետութեան մասեր եւ դադարեցին գոյութիւն ունենալուց, իբրեւ անկախ եւ ինքնուրոյն պետութիւններ: Այդպէս վերջացաւ այն հերոսական մաքառումը, որ երեք տարի շարունակ անընդունաւորութեամբ եւ բացառիկ անուշուրութեամբ առաջ տարաւ բոսնիական ազգը անգլիացիների դէմ եւ իր ցոյց տուած խիզախ ճակատամարտերով եւ հնարագիտ զորախաղերով հիացում առաջ բերեց լուսաւոր մարդկութեան բոլոր երկիրներում: Բայց կռիւն անհաւասար էր: Ոչ անպատմելի եւ աննկուն քաջութիւնը, ոչ համազային անօրինակ անձնուիրութիւնը եւ ոչ դիւցազնական մի շարք սխրագործութիւնները չը կարողացան դիմանալ այն անհեղ զօրութեան առաջ, որ հանդէս բերեց անգլիական պետութիւնը իր մեծ

հարստութեամբ, կատարելագործված զենքերով եւ բազմաթիւ զօրքերով: Յետ նայելով այն բոլոր եղելութիւններին, որոնք տեղի ունեցան անգլո-բոսնիական պատերազմի սկսվելու եւ ընթացողի ժամանակ, մենք նկատում ենք, որ բոսնիական ազգը շատ համակողմանի եւ վշտակիցներ ունեցաւ, բայց մի եւ նոյն ժամանակ նա զոհ դարձաւ կեղծաւոր բարեացակամութեան եւ անհիմն խոստումներին: Եւրոպական շատ նշանաւոր գործիչներ, փոխանակ զգուշացնելու բոսնիներին վտանգի մասին, խրախուսում էին նրանց անդադար շարունակելու իրանց բռնած ընթացքը, յոյս առնելով, որ արտաքին օգնութիւնը շուտով վրա կը հասնի նրանց պայքարի: Բոսնիների ներկայացուցիչները Եւրոպայում բոլոր ժամանակ այդ յոյսերի երազներով էին կերակրւում պատերազմական դաշտում կռուողներին եւ օրէցօր աւելի ու աւելի դժուարացնելով հերոսական ազգի համար պատուաւոր հաշտութիւն կայացնելու խնդիրը, աւելացնում էին առանց այն էլ մեծ գոհութիւնը նորանոր գոհւթիւնով: Լսելով եւ կարդալով այն բոլորը, ինչ որ խօսվում եւ գրվում էր Եւրոպայում, ամեն մի կողմնակի անձ կարող էր կարծել, թէ անհաւասար կամ միւս օրը լուսաւորված մարդկութիւնը սուր կը բարձրացնէ բոսնիների օգտին: Բայց ոչ մի ձայն, ոչ մի ձեռք փորձ անգամ չարին կանգնեցնելու անհաւասար կռիւն: Աւելի լաւ էր չունենալ այդպիսի բարեկամներ եւ քա-

ջաւերդներ, քան նրանց վրա յոյս ունենալով՝ կորցնել այն ամենը, ինչ որ թանկ էր կուլտուրական բօէր ազգի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ո Ր Ե Խ Ը
(Շուշու գաւառից)

Շուշու եւ Ջիբրայէի գաւառների ամենակատաղի թշնամին մորենքն է: Ահա չորս տարի է, որ դարձան մեզ մօտ միշտ մօրենքն է լինում: Թէպէտ մորենքը լինում է Շուշու գաւառի դաշտավայրերում, բայց լեռնաճակ դիւղացիները պէտք է պակցեն դաշտավայրի դիւղացիներին մօրենքը կոտորելու: Դեռ դարձան սկզբներին լուր էր տարածվել, որ այս տարի մորենքն չը կայ, իսկ ապրիլին եկած ձիւնը, որ, բացի արտերից եւ խոտից, ամեն ինչ ոչնչացրեց, կարծես հաստատում էր տարածված լուրերի ճիշդ լինելը: Բոլորը ուրախ էին, որ գոնէ այս տարի ազատ կը լինեն «մորենի կուլից» (կարծում էին թէ մորենի սերմը ցրտառաւ է եղել): Բայց աւագը, դա ցնոր էր: Տեղական պրիստաւը հրամայում է տունը մի մարդ ուղարկել մորենի տեղը: Մորենի վնասը ամենքին յայտնի է. բացի նրանից, որ ոչնչացնում է արտերը՝ նա տալիս է եւ ուրիշ վնաս,—գիւղացուն գրկում է դարձանացանից, այգին ու բանջարատունը չիւնելուց, շերամի որթը պահելուց, որ մեծ օգուտներ է տալիս Շուշու գաւառի գիւղացիներին: Իսկ գիւղի մէջ սկսվում է մի կատարեալ աշտարակայինութիւն: Տանուտերը, աղսաղ-կայները (ունեւորները, վաշխառները, նոր ձեւի շորեր հագնողները) հրճվում են.—մէջտեղ օգուտ կայ... Այդպէս էլ խեղճի, աղքատի դրութիւնը: Նա գիտէ որ գրկվում է իր աշխատանքի ամենալաւ ժամանակից, գիտէ, որ եթէ ինքը տան օր պիտի մնալ մորենի կոտորելու համար, իբրեւ իր պարտքը, նրա տանուտերը պիտի ստիպէ աւելի մնալ ուրիշների տեղը: Այս րօպէիս գիւղերը դատարկված են տղամարդկանցից. բացի դատաւորներից եւ աղսաղակներից, գիւղական այս հոշակաւոր տուգերից, ինչպէս ասում են «փափաղաւոր

չէք տեսնել», իսկ նրանց կանայքը պէտք է միշտ հաց ուղարկեն բանուորներին՝ այն էլ փողով՝ ամեն մի անգամը 10—20 կոպէկ տալով: Բայց այստեղ ինքն ըստ ինքեան հարց է առաջ դալիս՝ արդեօք հաց կայ, որ զեղչկուհին ուղարկէ իր բանուոր ամուսնուն: Ոչ, հաց չը կայ. տնայ ջանի տարի է, դիւղացին ոչ մի պտուղ չէ ստանում՝ կամ երաշտն է ոչնչացնում, կամ կարկուտը, կամ անձրեւները: Տանը հաց չը կայ, փող էլ չը կայ հաց գնելու, խեղճ կիւր պահմայ դիմում է ունեւորներին եւ վաշխառներին:

Ամեն տեղ խեղճը ճնշված է, իսկ գիւղերում էլ աւելի: Ամենից առաջ տանուտերի մօրակի հարուածը դիպում է «ծալուտ» հանող գիւղացուն, նա իրաւունք չունի ձայն հանելու. իսկ եթէ նա զանգատով տանուտերի վարմունքը դէմ, գիւղական տուգերը տանուտերի ետեւից սարի պէս կը կանգնեն, ուստի նա լուս տանում է ամեն տեսակ զրկանքներ, անիծելով իր բաղը. իսկ ունեւորները, օղիի չիւրը թափելով տանուտերի եւ նրա արքանաւանների կողմը, բոլորից ուշ են գնում, այն էլ եթէ վերեւից չեն ստիպում: Բայց ստիպել, զննել թէ ինչ ձեւով են հաւաքում այս մարդկանց, ոչ ոք չէ հետաքրքրւում: Միայն թէ հրամանը կատարված լինի, ո՞վ է մտածում ճնշվածների մասին:

Ամեն տարի բանուորներին ձրի հաց էին տալիս, բայց այս տարի հայոց գիւղերին ոչինչ չեն տալիս: Որքան մենք գիտենք՝ Թաղավարը, Թաղար, Տոյ, Տուսի, Հողեր, Ազոյս եւ այլն հասարակութիւնները իրանց հացով պէտք է մօրենի կոտորեն, իսկ թուրք հասարակութիւններին, ինչպէս լուսում ենք, հաց տալիս են:

Գիւղացիները պէտք է իրանք պատրաստեն բոլոր գործիքները եւ իրանց փողով տանեն մօրենի տեղը՝ ցախաւեներ, բահեր, գերաններ խոտը հնձելու համար եւ այլն:

Մեր հաւաքած տեղեկութիւններից երեւում է, որ գիւղացին գնալով կոտ, տանը ոչ մի կօպէկ չէ թողել եւ ոչ հաց. խեղճի կիւնը, որդիները մնացել են անօթի. կան տխուր ընտանիքներ, որոնք օրերով հացի երես չեն տեսնում: Կերակրվում են վայրի բոյներով, կամ եթէ երբեմն խղճայ ունեւոր գիւղացու կինը, մի կտոր հաց տալ քաղցած երեխին, այդ է խեղճերի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուղթիկ տպագրութիւններ)

XV

Ձենովայում եմ: Սա արդէն հարաւ է, փարթաւ բնութեամբ, ճոխ բուսականութեամբ, մշտնօրէն, կապուտ երկնքով հարաւ: Ապրիլի կէսն է, Ձենովայի ծովափը եղբորդ ընտանիքի շարքերը ողջ կանաչապատ են. բնութիւնը մի թափ ունի այստեղ, որ հեզում է ձրման ու ցուրտը. ամեն ինչ խոշոր է, ծաղիկ ու տերեւ, ծառ ու խոտ եւ որքան կանխահաս են ամենը, կարծես շտապում են: Իտալիայի ափերը ողողող ալիքները Աֆրիկայի գոլ շունչն ունեն, որ Միջերկրական վրայից սուրբով անցնում է դէպի հիւսիս՝ մինչեւ Ձենովայի ծոցը եւ գաղջ մթնոլորտ է պահպանում այս երկրներում: Այստեղ ծովն այժմ մառախուղ չունի, ալիքներն իրանց խաղերի մէջ մի ինչ որ փրփուրներ ունեն, նրանց շտապն աւելի ծիծաղի լայն մանչոյն է նման, կապուտը մոլոր է եւ հմայի, նա երկնքի ջրյին է:

Մովային մթնոլորտի նուրբ թափանցիկութեան միջից հեռու, հեռու ծրագրվում են գաւառները: Բոլորները իրանց կապտաւուն ջրերով, ձեւերի նկարական կատարելութեամբ, մի հանգամանք՝ որ հնարանք է դարձնում հարաւուն գեղարուեստի ծայրագոյն զարգացումը: Քիչ անհարմար կայ այնքան դեղնեղիկ, որքան փոքրիկ առաջատար նաւակները հարաւի ջրերի վրա

վաղ առաւօտեան, շողազարդ լուսաբացին կամ երկնքի վերջաւորին, երբ երկնքի գոյնի բոլոր նիւանները արտացոլում են ծովի թափանցիկ մակերեւոյթի վրա, երբ նաւակը, իր դոյզ սպիտակ առագաստներով թռւում է հեռավոր գոյնից լոյսերի մէջ լողացող լուսաթափայլ հրեշտակ. ամենամեծ նկարիչը հարաւում՝ ինքը բնութիւնն է եւ մարդը՝ անգամ, հանձարեղ մարդը, նրա յաւիտենական աշակերտն է իդէալիս հանելու յալատեւ եւ անյազ տենչով բռնված:

Ձենովայի Իտալիայի հիւսիս-արեւմուտքի ծովափին բաղաձա՞ ասես դեռ խեղճ խեղճ է նա: Եւ ոչ չէ արեւելք, այնտեղ ուր Ադրիատիկի վրա նստել է ծովերի նախկին թագուհին՝ Վենետիկը: Երկու քաղաքների տեղը բնութիւնից այնպէս է սահմանված, որ մրցութիւնն ու կռիւն անխուսափելի եղաւ նրանց մէջ: Ուժեղ ու բարդաւաճ այս երկու հանրապետութիւնները, ծովային բնագործակ առեւտրով, երկրւան էլ դէպի արեւելք էին նայում, հարուստ աւաքի, վաստակաշատ առեւտրի այդ աշխարհը Պատմութեան բոլոր ընթացքում Միջերկրականը համարեալ երեք երկու տէր չէ ունեցել, որ խաղաղութեամբ բաժանէին նրա տիրապետութիւնը: Նրա ափերին ազգերը հին դարերից արեւմտ պայքարի մէջ չափել են իրանց ոյժերը, մորթութիւն, ընկել են ուժասպառ, ինչպէս մի գեցեցիկ կնոջ համար մաքառող հոմանիստ պայքարի: Այդ դարաւոր մրցութիւնն էր, որ աւելի նոր ժամանակներում վերակենդան Ձենովային եւ Վենետիկը, երկու ազգակից, բայց աստիճան հանրապետութիւնները եւ արեւմտ ընդհարումներով թուլացան, ինչպէս Աթէնքն

ու Սպարտան, եւ օտարի լծի տակ ընկան միացեալ Իտալիայի մէջ վերստին փայլելու համար: Իտալական շատ քաղաքներ իրանց արտաքին տեսքով դեռ բաւական յիշեցնում են միջին դարերը. նրանց վրայից ժամանակն անցել է առանց հետք թողնելու, մինչեւ Ձենովայի հին պահելով հանդերձ, նոր ժամանակներին, նոր քաղաքակրթութեամբ, կենքի նորագոյն պահանջներին անհրաժեշտ հարկն է տուել: Հին Ձենովայի կողքին եւրոպական մտքով մի նոր քաղաք է բարձրացել իր օղակաւ ու լայն ձեւերով: Իր բազմաթիւ տներով, որ իր փայլուն տակ ծածկել, նաեւ տեղեր է հինը, ինչպէս մի տեղի, նոյնպիսի մարմին վրա ձգված թանաքաղին բնակել: Դեռ մնում են քաղաքի հին մասերում միջնադարեան, նեղ, մանուշակապտ փողոցները, խաւար, զատիվայր եւ զարդեր, ուր բազմաթիւ նեղիկ տները դէմ առ դէմ այնպէս մօտ են կանգնած՝ կարծես գրկվում, համընթացում են իրար հետ, որոնց լուսաւորութեան լուսաւորում ցատկել կարելի է. դեռ մնում են այդ նեղ փողոցների բարձրութեան վրա կանգնած կամուրջները՝ որոնք նեղ կարիքներով կապում են իրար հետ երկու չինութիւններ, կանգուն են դռների եւ բարձրաշուքաւորութեան կառուցած շքեղ պալատները, հաստ, քանդակազարդ դռներով, արձաններով, մոզայիկներով, բայց այդ բոլորի շուրջը պատել են քաղաքի նոր թաղերը, նոր հրապարակները ու նոր փողոցները Մաձիկներին, Դարիբաղիին, Վիկտոր Էմանուէլի անուններով: Քաղաքի ոչ մի մասում հնի եւ նորի այդ մրցութիւնն այնպէս աչքի չէ ընկնում, որքան շուկայում: Նոր փողոցների վրա առաջ են ե-

կել մեծ վաճառատներ ժամանակակից արդիւնաբերութեան նորագոյն արգասիքներով, բայց ծովափին կայ մի հնագին շուկայ, ծածկված փողոցի վրա զետեղված հին խանութների ամբողջ շարքեր իրանց նախնական վիճակում: Եւրոպական եւ ոչ մի քաղաքում ինձ չի վիճակվել տեսնել մի շուկայ, որ այնքան արեւելքը յիշեցնէր, կովկասի մեծ քաղաքների մէջն ու մէկի մեծ վաճառատները: Աւելի ուշագրաւն այն է, որ այստեղ վիտացող ամբոխն էլ արեւելքի այն կեղտոտ, սեւ ամբոխն է յիշեցնում, զանազ ու մոլոր, գաղափար ու աղմկալի: Սա միջնադարեան Ձենովան է, կարծես, եւ հեռու արեւելքից եկող նուրբ զանազան ազգերի ներկայացուցիչներն են դուրս ձգել ափը, բազմաթիւ եւ բազմաթափաղ, որոնք իրանց փէշերի վրա ման են ածում երկրէ երկիր իրանց վաճառքի հոտը, մի անախորժ մթնոլորտ: Խանութներում էլ ապրանքները դասաւորված են արեւելեան ձեւերով, պարզաւորումներ եւ աշխատանքի բաժանումը կարծես դեռ չեղած չէ, մանրամասնաւ երկվորէն էլ ունի, ածխվածաւոր՝ պտուղներ, փականագործի կողքին չիթ վաճառողն է, պաշարեղէնի խանութի հարեւանն է պայտահարը: Այդ խանութների առաջ վաղ առաւօտից մինչեւ ուշ գիշեր ետում է իտալական ամբոխը. ոտաբոլի ու գլխաբաց, պատառոտուն երեխաներ, որոնք ձեռք են մեկնում օտարականին կամ գետնից ծխախոտի մնացորդներ հաւաքում: Կեղտի մէջ կորած, առնայի դէպքով հաստամարմին կանայք, որոնք իրանց գրկներին վրա կրում են հաւաքին կապոցներ եւ քայլում են աշխատելով հաստ պարանոցները ուղիղ պահել ծանր բեռի

կերակրվելու աղբիւրը, իսկ ունեւորի սիրտը բար է՝ նա չափ դժուար է մտնում քաղցածի դրութեան մէջ. նա խուլ է եւ կոյր. նա սիրտ չունի խելի արտասուները սրբելու:

Մորեկը կոտորելու համար, ի դէպս, աւելորդ է ներ համարում ասել, պէտք է ուշք դարձնել երկու կէտի վրա՝ 1) մորեկը ընդհանուր թշնամու գէտ պէտք է կուել ընդհանուր ոյժերով: Բայց իրականութեան մէջ այդպէս չէ: Մորեկը կոտորելուն չեն մասնակցում բեգերը, իսկ բեգերը աւելի շատ վարուցանք ունեն, քան թէ գիւղացիները, դեռ աւելի կասեմ, այժմ գուցէ գիւղացիների 1/100 է երկրագործութեամբ պարավում, իսկ բեգերը համարեա բոլորը, քիչ բացառութեամբ՝ ինչո՞ւ ուրեմն նրանք չը պէտք է կուեն ընդհանուր թշնամու գէտ, իրանց արտերը ազատելու, իսկ գիւղացիները, որոնք շատ քիչ են պարավում վարուցանքով, պէտք է մենակ տանեն այդ բեգը:

2) Յայտնի է, որ 1886 թ.ին եղել է մեր գաւառում ընդհանուր ժողովրդագրութիւն. այդ օրից անցել է 17 տարի, որի ժամանակ ծխերը աւելացել են: Այսպիսի դէպքերում, որից, կոտի ու բեգառի ժամանակ, գիւղի կառավարչները, օգտվելով գիւղացու տգիտութիւնից, ծուխ չեն հաշուում, թէպէտ 86 թ.ի մի ծուխը մինչեւ 92 թ. աւելացած լինի 4—5 ծխով: Այս ձեւը ճշդութեամբ կատարվում է հարուստների, վախառուների եւ գիւղական ցեղերի վերաբերմամբ, իսկ աղքատների վերաբերմամբ—ոչ: Բայց եթէ հարկւոր է մի որ եւ է համարասանակն չինել, մի որ եւ է կաշառակերի, տղէտ տիրացու ձեռնադրելու, երէց-փոխի ու տանտուտերի հաշիւները արդար ճանաչել, տեսնում էք սնկի պէս դեմնից դուրս են գալիս աւելացած ծխերը եւ ստորագրում են համարասանակն:

Ժամանակ է ուշադրութիւն դարձնել գիւղացու վրա:

Գ. Յ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 16-ին

Մրանից վեց տարի առաջ երեք քոյր երեւոյթանալու Բագու մի մասնաւոր երաժշտական ուսումնարան բաց արին, որը իր գոյութեան առաջին տարին բաւական աշակերտներ ունեցաւ: Ժամանակի ընթացքում այդ երաժշտական դուստրութիւնը լուրջ պահանջ դարձաւ եւ երեք քոյրերի հիմնած ուսումնարանը աւելի ամուր հիւրերի պէտք զգաց: Մրանից մի տարի առաջ քոյրերից մէկը գնաց Պետերբուրգ, զիմաց ուր հարկն է եւ երկար անհամաձայնութիւնների առաջն առնելով, իրանց մասնաւոր ուսումնարանը դարձրեց Կապերական երաժշտական ընկերութեան ճիւղ, եւ որ գլխաւորն է, ինքն ընտրվեց այդ ճիւղի ղեկավար: Իր ժամանակին շատ ուռւ թերթեր գրեցին այդ առաջին օրիորդ-ղերեկտորի մասին:

հաւասարակշռութիւնը չը կորցնելու համար. սա մի ընդհանուր երեւոյթ է իտալական համարեա բոլոր քաղաքներում, մնացորդ երեւի նախնական բարքարոս բարքերի, երբ կինը նկատվում էր իբրեւ բեռնակիր անասուն: Ծուկայում կարելի է տեսնել վատ եւ կեղտոտ հազմված տղամարդկանց ահագին բազմութիւն, անգործ, յօրանջող բանւորներ, երբեք չաշխատող դատարկագործներ, որոնք շարված են իրար կողքի մի թմբի, մի պատի վրա, լուսուռ մեծ ծխերով եւ անվերջ թեքում ոտների առաջ ծխի իւրաքանչիւր ջրւան վեր արձակելուց յետոյ: Այստեղ են նաեւ բազմաթիւ հաշմանդամ կամ առողջ մուրացիկներ, կասկածելի պարագմունքների տէր ճարպիկ խաբեբաներ, ճանապարհորդներին զանազան անօգուտ ծառայութիւններ առաջարկող աներես թշուառականների ահագին խմբեր: Նաւամատոյցը հետու չէ, իւրաքանչիւր նոր հասնող նաւ իր բերած ճանապարհորդներով եւ վաճառականներով գործունէութեան, աշխատանքի, վաստակի յարմար հող է ներկայացնում այս ամբոխի համար, հասկանալի է, թէ ինչո՞ւ ամեն արհեստի, ամեն պարագմունքի մարդիկ, դատարկագործներ եւ պատուաւոր վաստակով ապրող խելոճեր այստեղ են խմբվում:

Հին-Ջենովան իր նախկին տէրերի, կառավարիչների արձաններն ունի այս ու այն պալատում, այս ու այն հին սրահում երկու սիւնների մէջ, մի դրան վրա, մի աստիճանի կատարին, իսկ նորը իր Գարբարալին, Մաձձինին եւ Վիկտոր-Էմանուէլը, Նոր-Իտալիայի մեծ որդիները, որոնք նրա միութիւնը դարձնեցին Ջենովան առանձնապէս հպարտ է իր

Բագու վերադառնալով, օրիորդ-ղերեկտորը շատ կարճ ժամանակում հրաւիրեց վարչական մասի համար Բագուի հասարակութիւնից հինգ ղերեկտորներ, հրաւիրեց հարկաւոր թիւով ուսուցիչներ, որոնցից մի երկուսը տարվայ ընթացքում կարողացան ցոյց տալ իրանց իբրեւ արժանաւոր երաժիշտներ: Անդալ սեպտեմբերի վերջին սկսվեց արդէն կանոնաւոր ընդունելութիւն եւ դասընթաց: Սկզբի ամիսներում կան 119 աշակերտներ, իսկ մինչեւ օգոստոսի վերջ թիւը հասաւ 150-ի: Երէկ աշակերտական տարվայ վերջը լինելով, «ճիւղը» տուեց իր տարեգրքի ձեւերը: Եւ մի երկար պրոգրամայով ծանօթացրեց իր աշակերտներին հասարակութեան հետ: Այդուրիւնը մեծ էր:

Մենք ուշի ուշով հետեւում էինք թէ աշակերտներին, թէ ծնողներին եւ թէ առհասարակ հանդիսականներին վերաբերմունքին դէպի երաժշտութիւնը... Այդ բանը եւ ընդգծում եմ ներառ համար, որ արանից մի 3—4 տարի առաջ թէ աշակերտները եւ թէ ծնողները երաժշտական ուսման վրա նայում էին իբրեւ մի թեթեւ գուարճութեան վրա, մինչդեռ այս վերջին կօնցերտը ցոյց տուեց, որ թէ ծնողները եւ թէ աշակերտները սկսում են նայել երաժշտական ուսման վրա, ինչպէս մի լուրջ մասնագիտութեան վրա, մասնաւոր հայերը: Այսպէս ցոյց թող լինի այն, որ աշակերտներին մի քանիսը մի տարուց յետոյ տեղափոխվում են Պետերբուրգի կօնսերվատօրիան: Ուրախալի երեւոյթ է հայերիս համար:

Մի ուրիշ երեւոյթ, որ նոյնպէս այս անգամ պարզ աչքի էր ընկնում, այն է, որ արանից 2—3 տարի առաջ աշակերտներին մեծամասնութիւնը եւ աւելի չնորհալինները կամ ուսմանը էին կամ հեղանք, հայերը ոչ թէ միայն աչքի չէին ընկնում իրանց ընդհանրութիւններով, այլ եւ լուրջ չէին վերաբերվում գործին, մինչդեռ այս վերջին 2 տարին բոլորովին ուրիշ բան է երեւում: Վերջին կօնցերտին ամենաընդունակ աշակերտները հայերն էին: Օր. Շիւրեանը եւ պ. Կաճկաճեանը իրանց վրա էին դարձնում հասկացող հանդիսատեսի ուշադրութիւնը եւ ինչպէս իմացանք դրանք պիտի չարունակեն կատարելագործվել: Այդ երկուսն են նոյնպէս ամբողջ ուսումնարանի ամենաընդունակ եւ աչքի ընկնող ոյժերը: Երկու օր. Յակոբեանցիները նուազում էին մեծ հասկացողութեամբ, օր. Շարաբանդեանը նոյնպէս հասկանում էր իր նուազածը: Լաւ էր նոյնպէս օր. Բալանան... Առհասարակ հայերի մասին ինքը, վարչութիւնը, մեծ գովազատներով եւ լուսուռով: Իրանամուրի վրա ուսմանը միայն երկու հոգի աչքի ընկան—օր. օր. Բէլինսկայա եւ Կոլբոս...

Երեւոյթութեան մէջ նոյնպէս օր. Մամիկոնեանը աչքի ընկաւ իր փոքրիկ, բայց շատ դուրեկան ձայնով:

Վիթենշիլի վրա երկու հոգի նուազեցին, որոնցից մէկը, Նաբիբեան, չը նայած որ ընդամենը 3 ամիս է սովորում, բայց վարչութիւնը

Մաձձիններով, որ իր ծոցից ծնվեց եւ այժմ էլ իր ծոցումն է թաղվել: Նրա արձանը իր գեղեցկութեամբ եւ գրուած դրվածքով գերազանց հասկանալի է եւ համարեա բոլոր միւսներին: Հին եւ նոր արձանները իտալական բոլոր մեծ եւ փոքր քաղաքների անհրաժեշտ զարդերն են. սա ամենալաւ ապացոյցն է այս երկրի գեղարուեստական ճաշակի: Մինչեւ որ գեղարուեստը չաղբոջն չը փոխի փողոցներում եւ հրապարակներում, նա չէ կարող մի ժողովրդի մասնաւոր, ամբոխի սեփականութիւն դառնալ եւ իր իսկական դերը կատարել: Ըստ իս հրապարակի մի արձանը, մի քանդակագործ ու գեղեցիկ աւազանը գեղարուեստական դաստիարակութեան տեսակէտից մի միւզէ արժէ: Ի տարիայում իւրաքանչիւր հին տուն, պատի մի կտոր կրում է իր վրա սիրուն քանդակ, մի աղող կենդանակերպ, առիւծ, արծիւ, գրիֆօն, կամ միշտպա Մրանց չուրջը, մասնաւոր արձանագործ մարմարէ աւազանների փախերն, առաւտից երեկոյ խաղում են մանուկները, ժամերով նստած են մնում հետաքալարները, դիտում են, վայելում եւ իւրացնում թողնեց դեռ եկեղեցիներն ու բազմաթիւ միւզէները, որոնցից իւրաքանչիւրը գեղարուեստի անհուն զանաճերն են պարունակում: Նոյնն է Ջենովան, հին թէ նոր մասում բազմաթիւ են գեղեցիկ յիշատակարաններ, ուշադրաւ չենք, արձաններ, միւզէներ, բայց արանց մասին յաջորդ նամակով: այժմ կուզէի խօսել մի կրօնական արձանի մասին, որ նոյնպէս ընդհանուր երեւոյթ է ամբողջ իտալիայում:

Կարծում եմ իւրաքանչիւր ճանապարհորդ նկատած կը լինի այն փոքրիկ, սիրուն Մազոն-

դուրս բերեց նրան հասարակութեան առաջ ցոյց տալու համար նրա երաժշտական ընդունակութիւնները...

Նախընտանի 3 ամսվայ յառաջադիմութիւնը երաշխաւորում է նրա ապագայ յաջողութիւնը: Մեր անկեղծ չնորհակալութիւնը օրիորդ ղերեկտորի տոկուն աշխատանքի համար, մասնաւորապէս ուշադրութեան համար, որ նա ունի դէպի իր հայ սանիկները, որոնց մէջ նա գրտնում է երաժշտական ընդունակութիւններ եւ մեծ խնամքով հետեւում է նրանց զարգացման: Առանձին չնորհակալութեան արժանի է եւ վարչութեան կրտսեր ղերեկտոր պ. Շուստլերը, որի նիւթական օգնութեանն է պարտական «ճիւղը»: Առաջին տարին եւ եթ «ճիւղը» 5—6 հազար ղիֆիցիտ ունեցաւ, պ. Շուստլերը, ինչպէս իմացանք, առանց մէկին դիմելու, իր գործունէութեան ծածկել է այդ ղիֆիցիտը: Ինչպէս եւ ամեն բանում, այստեղ էլ աչքի է ընկնում հայ ծնողների անտարբերութիւնը. առեւք որ մեր երիտասարդութիւնը աչք չէ բաց անում կլուրի թղթախաղից, օպերայից, օպերէտից, ֆարսից, ցիրկից եւ այլ սոյնանման գործարարութիւններից, բայց մեր ծնողները պէտք է քիչ ուշք դարձնեն եւ ամեն կերպ պահպանեն ճիւղի գոյութիւնը, որի օգտակար լինելու մէջ այժմ նրանք համոզվեցին:

Երաժշտական ընկերութեան ճիւղը ունի երկու կարգի անդամներ, տարեկան 10 րուբլի վճարողներ եւ պատուաւոր անդամներ, որոնք վճարում են 25-ական րուբլի: Ահա այդ անդամավճարով եւ տարեկան 2—3 կօնցերտի արդիւնքով պիտի ծածկվի ուսումնարանի ղիֆիցիտը: Երաժշտական ընկերութեան ճիւղը մինչեւ այսօր ունի մի քանի անդամներ, մինչդեռ պիտի ունենար մի քանի հարկեր: Եղածների մէջ էլ կարծեմ ոչ մի հայ չը կայ: Միթէ կարող են հայերը օպերայի մի լոճայի համար 25 րուբլի տալ, ֆարսում մի տոմսակին 5—6 րուբլի, ցիրկի մի լկտի միմոստեւուն հարկւրանոց նուէր... Իսկ այս գործում ծանր է նրանց մի 10 րուբլի անդամավճարով ապահովել այդ օգտակար հիմնարկութեան գոյութիւնը: Մասնաւորապէս որ այդ 10 րուբլու համար նրանք տարվայ ընթացքում կայացած 2—3 կօնցերտին ստանում են ձրի տոմսակներ...

Կարծեք թէ օրիորդ ղերեկտորը հայերի անտարբերութեան մի հարուած հասցնելու համար մի քանի հայ աշակերտներ է ընդունել ճիւղ... Եւ կարծում եմ գոնէ ինքնասիրութիւնը պահանջում է մեր աղաներին արել արատը իրանցից, թող չը պէտք է տալ որ մի ոտնիկով ծառայող մարդ, ինչպէսին է պ. Շուստլերը, իր քրտնքով աշխատած գրառով ծածկէ այն ղիֆիցիտը, որը առաջ է գալիս մեր աղաների զուակներին երաժշտական ուսում տալու գործում...

Ո՛ր է ձեր ինքնասիրութիւնը:

2.

նանքը, որոնցով իտալացին սիրում է զարդարել իր բնակարանի պատը: Գրիցի, փողոցի կողմից: Այդ փողոցի արձանը նրա տան պահպանել է եւ նստած է այնտեղ՝ պատի մի նեղ փորուածքի մէջ խելոճ Աստուածածինը—գրկած փոքրիկ Յիսուսին եւ հեղուքեամբ նստում է վարժ փողոցի անցու դարձին, նայում է, կարծես չը գիտէ, թէ ինչո՞ւ է ինքն այնտեղ, խելոճ, մոռացված: Անձրեւն է նրան ծեծում, ձիւնն է թափվում գլխին, արեւն է այրում, բայց Աստուածածինն այնտեղ է, ինչպէս մի զգաստ պահպան եւ թախծալից ու խելոճ իր յաւիտենական հսկումն է կատարում: Նրա վրա ոչ ոք ուշք չէ դարձնում, ոչ մի անցորդ չէ խաչակնքում մօտովն անցնելիս, կարծես նրան դրել են այնտեղ եւ մոռացել, քանի փոշիով ծածկել է նրա գլուխը, անձրեւը ցելն է կազմել նրա զգեստի ծալքերում, բայց ոչ ոքի փոյթը չէ եւ նա այնտեղ պիտի մնայ, քանի կանգուն է տուել: Եւ մի այդպիսի Աստուածածին տեսայ փոշոտ ու մաշված, մոռացված ու խելոճ, այդ դեռ քիչ էր, անչեւն էլ նոր տեսված սպիտակեղէններ էին կախիլ թելի վրա չորացնելու համար: Եւ մի խիտ կասկածելի մաքրութեամբ վարտիկ փոխած էր հէնց նրա քթի տակ եւ տարուբերվում էր քամու առաջ: Եւ Աստուածածնի պաշտամունքի այս անսովոր եղանակը որքան ընդհանուր է այստեղ, այնտեղ ամենամիայնի օտարականին մտածել է տալիս: Արդարեւ թէ կրօնական զգացումներից զրգված իտալացին դրել է այդ Մազոնան իր պատի վրա, ապա ինչպէս բացատրել այդ աւելի քան անպարկեշտ վերաբերմունքը դէպի իր տանու սուրբը, մտածում է գուցէ եւ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Ստացանք Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան օգտին Ալեքեմանից, Կարապետ Ամատունց, 20 րուբլի, որ նուիրել է Երեմիա քահանայ Ստեփանեան՝ իր հանգուցեալ կին Թագուհի Արթուրեան Ստեփանեանցի յիշատակին: Այդ գումարը նախկին նուէրների հետ կը կազմէ 678 րուբլի 50 կօպէկ:

Պ. Դաւիթ Աղամեան մի օրինակ «Մշակ» է նուիրում իր հայրենի Քեաթուկ գիւղի հասարակութեան Պարոնը երրորդ տարին է, որ անում է այդ նուէրը:

Բնագիտութեան, մարդաբանութեան եւ աղագրութեան օրիորդների կայսերական ընկերութիւնը Անդրկովկաս է ուղարկում այդ ընկերութեան անգամ Ջավադուկուն՝ կենդանաբանական հետազոտութիւններ կատարելու եւ անդրկովկասեան երկաթուղու չրջանում հասարակութեան ժողովելու համար:

Երէկ, երեքշաբթի, մայիսի 21-ին, Արեւմտեան Կովկասի նուաճման տարեգրքի առթիւ, ռուսաց Ալեքսանդր-Նեւսկի ղեկավարած տաճարում տեղի ունեցաւ պատարագ եւ ապա նոյն տաճարի գաւթում գոհացողական մաքրութեան օրը: Դրա ժամանակ Արեւմտեան տարից 21 անգամ թնդանոթ արձակվեց: Մաղթանքից յետոյ կատարվեց եկեղեցական զօրահանդէս:

Աշխատանքի տների մասին հոգացող հոգաբարձութիւնը միջնորդութիւն է յարուցել կառավարութեան առաջ հաստատելու Գանձակի աշխատանքներին օգնող ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը: Բայց մինչեւ կանոնադրութեան օրինական կարգով հաստատվելը այդ ընկերութեան թոյլ է տուած այս տարվայ սեպտեմբերից բանալ ապաստարան կամ ուսումնարան:

Կիւիւում մօտ ժամանակներումս կը բացվի կանանց տնարարական ուսումնարան՝ նման արտասանմանս եւ Պետերբուրգի տնարարական ուսումնարաններին: Մտնել այդ ուսումնարանը կարող են միայն այն անձինք, որոնք աւարտել են իրանց ուսման ընթացքը կանանց գիմնադպեաներում: Նոր բացվելիք ուսումնարանում պէտք է դասաւանդվեն—լրացուցիչ պարագմունքներ ուսաց եւ օտար գրականութիւնից, առողջապահութիւն, տարրական տեղեկութիւններ բժշկականութեան մասին, հոգեբանութիւն, մանկավարժութիւն, ֆիզիկա, քիմիա, ապրանքագիտութիւն, հայրենագիտութիւն, հաշուապահութիւն, խոհարարութիւն, գիւղատնտեսութիւն, տնարարութիւն՝ բոլոր ստանձնափակ մտքով—բնականների սարք ու կարգը, կահուորութիւն, հագուստի, ոտնաման-

վրդովունքով մի երկուդած օտարական: Իացատրութիւնը սակայն պարզ է եւ վրդովելու ամենեւեւ տեղիք չը կայ, իտալացին սիրում է եւ կրօնը, եւ գեղարուեստը, թէ մէկը եւ թէ միւսը պատմութեան ընթացքում նա հասցրել է հազուադէպ զարգացման եւ չափանշան այդ երկուսը կատարելապէս խառնել իրար: Ներկայ դէպքում նա սիրում է իր Աստուածածնին ոչ միայն իբրեւ սուրբ, իբրեւ մի սիրուն արձան, գեղարուեստական մի գրաւիչ գործ, եւ անհրաժեշտ է գտնում որ երկու հայեցակէտով, որ Մազոնան այն իր պատի վրա լինի, նա կը նայէ, երբ թէ կամենայ, կը մաքրէ, երբ ժամանակ ու պատշաճ լինի, կը զգուշացնէ իր փառքը: Ո՛չ կրօնը եւ ոչ գեղարուեստը նա երբեք չէ դարձրել բացառիկ պաշտամունքի, մի տեսակ ֆետիշիզմի առարկայ, դրանք նրա բնութեան նրա ոգու ամենատոգորական պահանջների շարք են անցել, ինչպէս որ հոգեկան մի անորոշելի վիճակում նա սիրում է երգել ուր եւ լինի: Երբ այնպէս էլ նա ուղղում է, որ իր Մազոնան պատի վրա լինի եւ այդ արձանը սիրուն, դաւիչ լինի: Եւ որքան անհրաժեշտ է այդ Մազոնան, նրա համար նոյնքան անհրաժեշտ նրա նոյնքան բնական է, որ իր սպիտակեղէնը տեղ չը քթի տակ չորանայ, եթէ այլ յարմար չէ նրա կայ եւ դա ամենեւեւ արագվորութիւն չէ նրա աչքում: Գեղարուեստն իտալացում կրօն չէ, բայց կրօնը գեղարուեստ է եւ երկուսը միասին կազմում են այն, ինչ կազմում է իտալացու հոգեկան աշխարհի հիմունքը—յափշտակութիւնը դէպի իդէալը եւ սեր դէպի գեղեցիկութիւն:

Ա. Անանյան

Թեանը եւ աւելի մեծ ոյժով, քան այն ժամանակ, երբ մեզ կուէր ասպարէզը քաջացին մեր քաջ հակառակորդները, որոնց այժմ մենք ողջունում ենք, որպէս բրիտանական պետութեան քաղաքացիներին:

21 մայիսի

ԼՕՆԴՕՆ. Երբ մինիստրները գնում էին խորհրդի, ամբողջ ոգեւորված ցոյցեր արեց մինիստրներին, մասնաւոր Քալֆուրին եւ Չեմբերլէնին:

ԼՕՆԴՕՆ. Խաղաղութիւն կնքելը տօնվեց ամբողջ երկրում մեծ ուրախութեամբ: Այսօր շատ գործարաններ եւ ուսումնարաններ փակ են: Փողոցներում կազմակերպվում էին թափօրներ: Մի քանի քաղաքներում դատարանները դատաստանական ուղղիչ ատենակներում ազատում էին նրանց մօտ տարած կալանաւորներին:

ՕԴԵՍՍԱ. Այսօր, բոլորային շինութեան մէջ, բացվեց հաղորդակցութեան եւ ֆինանսների մինիստրութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը, որին մասնակցում են թէ ուսու եւ թէ օտարերկրեայ երկաթուղային գործերի ներկայացուցիչները՝ ուսու-գերմանական ներդրումական երկաթուղային հաղորդակցութեան վերաբերեալ հարցերը քննելու համար: Հաւաքվել են 27 անդամներ: Նիստերը կը շարունակվեն մինչեւ մայիսի 27-ը: Քաղաքագլուխը եւ բոլորային կոմիտէի նախագահը ողջունեցին համաժողովի անդամներին: Համաժողովին մասնակցողները կը նայեն քաղաքային տեխնիկական եւ երկաթուղային շինութիւնները: Քաղաքը համաժողովի անդամներին համար ճաշ է սարքում:

ՎիէննԱ. Բօրիսլավի ակցիօներական ընկերութեան հանգերում, Գալիցիայում, տեղի ունեցաւ գաղի բնակում: Սպանված են հանքային 16 բանուորներ եւ ծանր վիրաւորված են 4 հոգի:

ԲԵՐԼԻՆ. Երէկ վերջացած է եւ բացված է հաղորդակցութեան համար Շանտուեքի երկաթուղու գլխաւոր մասը:

ՈՒՏԲԵՆՏ. Լէյքս այժմ Պարիզում է, իսկ Ֆիշէրը, Վէսսէլը, եւ Վոյաքարն-Ուտըրխում: ԲԵՐԼԻՆ. Պրուսական պատգամաւորների ժողովը 133 ձայնով ընդգէմ 79-ի ընդունեց պահանջարկներին առաջարկութիւնը մաքսային հարկերը աւելացնելու մասին այն չափից աւելի, որ առաջարկել է մաքսային մասնաժողովը:

ԼՕՆԴՕՆ. Համալսելների ժողովը, Գալլէյէյները լինել են: Բոլորիկին, Բալֆուրին եւ Չեմբերլէնին հանդիպում են բարձրաձայն հաւանութեամբ: Բալֆուրը կարգաց բռնների զօրքի անձնատուր լինելու վերաբերեալ համաձայնութիւնը: Առաջին յօդուածում որոշվում է, որ դաշտում գտնվող քաղաքացիները անյապաղ զինաթափ են լինում եւ հրաժարվում են այլ եւս զինազրեւելու էղուարդ VII-ի թագաւորին, որին ճանաչում են օրինական թագաւոր, երկրորդ յօդուածով այն քաղաքացիները, որոնք գտնվում են դաշտում Տրանսիլանիա եւ Օրանժեան գաղթականութեան սահմաններից դուրս եւ բոլոր գերված քաղաքացիները հարաւային Աֆրիկայից դուրս, հէնց որ իրանց կը ճանաչեն թագաւորի հպատակներ, կը վերադարձվեն հայրենիք՝ քանի որ կը պատրաստվի եւ կապահովվեն միջոցներ փոխադրութեան եւ պաշարների համար: Երրորդ յօդուած. վերադարձող քաղաքացիները զրկված չեն լինի այստեղ ոչ անձնական ազատութիւնից, ոչ գործից: (Յօդուածը հաւանութեամբ է ընդունվում զինադրականների նստարանների վրա): Զորքորդ այսպիսի կարգով անձնատուր եղող կամ վերադարձող քաղաքացիները չեն յանձնվի ոչ քաղաքացիական եւ ոչ քրեական դատաստանի՝ պատերազմի հետ կապ ունեցող գործերի համար: Այս որոշումը չէ վերաբերում մի քանի յանցանքների, որոնք հակառակ են պատերազմական սովորութիւններին: Այսպիսի գործերը կը ընկնեն զինուորական դատաստանով պատերազմական գործողութիւնները դադարեցնող անմիջապէս յետոյ:

ԼՕՆԴՕՆ. Հօլանդական լեզու կուսուցանողի Տրանսիլանիա եւ Օրանժեան գաղթականութեան հասարակական ուսումնարաններում, եթէ աշակերտների ծնողները կամենում են այդ նոյն լեզուն եւս թող կը տրվի գործածել դատարաններում, եթէ այդ անհրաժեշտ կը համարվի դատաստանական գործը բարեբերու համար: Չէնք կրելու իրաւունք Տրանսիլանիա եւ Օրանժեան գաղթականութեան մէջ կը տրվի այն անձանց, որոնք կարեւորութիւն ունեն պաշտպանութեան եւ որոնք կը ստանան կարեւոր թոյլաւութիւնը: Չհետադարձ վարչութիւնը,

որքան կարելի է շուտով: Եթեք է փոխարինվի քաղաքացիական վարչութեամբ եւ հէնց որ թոյլ տան հանգամանքները՝ կը մտնեն պատգամաւորական հիմնարկութիւններ: Կեղացիներին ընտրողական իրաւունքներ տալու հարցը կը վճովի ինքնավարութիւն մտնելուց յետոյ: Առանձին հարկեր չեն դրվի: Իւրաքանչիւր չըջանում կը նշանակվի մի մասնաժողով, որին կը մասնակցեն չըջանի բնակիչները: Որպէս զի օգտութիւն ցոյց արվի նրանց՝ հայրենիք վերադառնալիս՝ անգլիական կառավարութիւնը մասնաժողովները տրամադրութեան տակ է դնում 3,000,000 ֆունտ ստերլինգ: Կառավարութիւնը պատրաստ կը լինի տալ, որպէս փոխառութիւն, նոյն նպատակով, հարկերից ազատ փանակներ երկու տարով: Ոչ օտարերկրացիներին եւ ոչ պատտամբներին իրաւունք չի տրվի օգուտ բաղել այս կէտերից: (Հաւանութեան բարձրաձայն նշաններ մինիստրական նստարանների վրա):

ԼՕՆԴՕՆ. Բալֆուր յայտնում է, թէ կան կարեւոր կէտեր, որոնք չեն մտել կիրակի օրը ստորագրված զօկումէնտների մէջ: Բօլթական պատգամաւորներին համաձայնութեան պատճէնը յանձնելուց յետոյ՝ Միլնէր կարգաց նրանց մի գրութիւն, որով Կապի եւ Նատուր ապաստանները պէտք է դառնան իրանց քաղթականութիւնների օրէնքներով: Կապի ապաստանները, եթէ նրանք հասարակ զինուորներ են, պէտք է պատճվեն՝ զրկվելով ընտրողական իրաւունքից:

ԼՕՆԴՕՆ. Բալֆուր շարունակում է: Համաձայնութիւնը ստորագրված է Միլնէրի եւ Կիտչենների ձեռքով անգլիական կառավարութեան կողմից եւ Շտէնի, Դէլէտի, Օլիվիէի ու Գերցօգի ձեռքով: Օրանժեան կառավարութեան կողմից, Շալի-Բուրգէրի, Բէյցի, Լուի Բոտայի եւ Դէլարէի ձեռքով: Տրանսիլանիան կառավարութեան կողմից: Բալֆուրից յետոյ խօսում է Կէմպելը—Բաններման: Նա հրաժարվում է որ եւ է նկատողութիւն անելուց, մինչեւ որ Բալֆուր ներկայացնէ զօկումէնտները եւ աւելացնում է, որ շուտով միջոցորդութիւն կը յարուցանէ ժողովի առաջ նորոհակալութիւն յայտնելու Կիտչենին եւ զօրքին:

ԼՕՆԴՕՆ. Թագաւորը աշխարհի բոլոր ծայրերից հեռագիրներ ստացաւ, որոնցով նորոհակալութիւններ են անվում խաղաղութիւն կապելու առիթով: Վիլհելմ եւ Ֆրանց-Յոլստէի կայսրները նոյնպէս ուղարկեցին չորհրդաւորութիւններ, կազմված ամենաարտադին ուժով: ՊԱՐԻՉ. Երէկ ոստիկանութեան պրէֆէկտ Լէպլին վրա ամբողջ կողմից, որ կանգնած էր հիւանդանոցի հանդէպ, գնդակ արձակեցին: Լէպլին վիրաւորված չէ: Գնդակ արձակողները թաղանթեցին:

ԼՕՆԴՕՆ. Վիլհելմ կայսրը իրանդիայի լորդ-փոխարքային չորհակալութիւն յայտնեց այն ընդունելութեան համար, որ ցոյց են տուել պրինց Հէնրիխին եւ նրա նաւատորմին, ցանկութիւն յայտնելով, որ այցելութիւնը մի այլ շողկապող օղակ դառնայ երկու երկրների մէջ: ԲԱԹՈՒՄ. Պարսկաստանի եւ Միջին-Ասիայի հետ առեւտրական յարաբերութիւնները ապահովելու համար՝ Վալիկազ եւ Մերկուրի ընկերութիւնը բացեց Բաթումում առանձին գործակալութիւն:

Եմբագիր՝ ԱԼԷԳՍԱՆԴԻ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ ե տ եր բ ու ը զ Է Օ թ ու լ ո ժ լ կ ի հ ի ւ ա ն
դ ա ն ո ճ ի օ ռ զ ի ն ա տ օ ռ
Բ ժ ի Շ Կ

Մ. Ի. ՄԵԼԻԻԲ-ԲԱԼԱՆԹԱՆԵԱՆ
ընդունում է ներքին, կանանց (գինեկոլոգիական մասամբ) եւ շղային հիւանդների, ամենայն օր, ժամի 9-ից—11 առաւօտեան, 5—7 երեկոյան:

Հասցէն՝ Գոյովինսկի պրոսպէկտ, տ. № 39, Պոնրօնի, Միլիօրօպովի դեղատան մօտ:
0—1

Անահիտ, Վարգէս եւ Մկրտիչ տէր-երեմեան Ստեփաննանցներն, իրանց հօր հետ, ի արտէ յայտնում են խորին չորհակալութիւն Արմաւիրի քահանաներին եւ բոլոր ծանօթ—բարեկամ անձանց, որոնք շտապեցին մեզ հետ ողբալ վաղաժառանգ երեցունհի:

ԹԵԳՈՒՀԻ ՏԻՐԱՐԱՆԱՄԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Մահը: Երեմիա քահ. Ստեփաննանց
1—1

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ
Լ Ո Ւ Ս Ա Տ Ի Պ Պ Ա Տ Կ Ե Ր Ը
ԳԻՆՆ Է 25 Կ.
Գումարով ցանկացողներին զեղումն կը լինի եւ ճանաչարգածախ չեն վճարի: Դիմել՝ Դիֆ-լիսե, Троицкая, С. Согомонянцу. 1—3

ՀԱՅՈՑ ԴԻՍԱՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
հրաւիրում է ընկերութեան անդամներին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, որ տեղի կունենայ կիրակի, մայիսի 26-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճում:
Պարագլուխների առարկաներն են՝
1) Ընկերութեան իսկական եւ նպաստող անդամների ընտրութիւն:
2) Բէպէրտուարական յանձնաժողովի ընտրութիւն:
3) Վարչութեան ղեկուցում վարչութեան անդամների հերթական պաշտօնաթողութեան մասին:
4) Ընթացիկ գործեր:
(Հ. Ն.) 1—2

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Բ Ա Ջ Ա Ր Ո Վ Ե Ի Ս Ի Ի Պ Ի Զ Ն Ե Ր Ո Վ
Մ Ե Շ Զ Բ Օ Ս Ա Ն Ք Ը
որ նշանակված էր մայիսի 19-ին, տեղի կունենայ հինգ շաբթի, մայիսի 23-ին, ДЪДСКІЙ САДЪ կոչված այգիում, իսկեղների ուսումնարանի հրապարակի հանդէպ, Միջակեան պողոտայի վրա:
1—2

Ը Ղ Թ Ա Յ
Նախարարներական ընկերութեան վարչութիւնը հրաւիրում է ընկերութեան պ.պ. բաժնետէրերին ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, որը տեղի է ունենալու կիրակի օր, մայիսի 26-ին, առաւօտեան 10 ժամին, քաղաքային տան դահլիճում:
Ձրագլուխ առարկաներն են.—1) Վարչութեան եւ վերաքննիչ յանձնաժողովի ղեկուցումը: 2) Տարեկան հաշիւ որոշումն եւ հաստատումը: 3) 1902 թվ. գործունէութեան հրահանգը: 4) Վարչութեան հինգերորդ անգամի ընտրութեան հարցը եւ 5) Վերաքննիչ յանձնաժողովի երեք անդամների եւ նրանց երկու տեղապահների ընտրութիւնը:
(12 եւ 25-ին) 2—2

Нефтепромышленное Товарищество
„ВОРОТАНЪ“
приглашаетъ г.г. пайщиковъ своихъ въ помѣщеніе конторы Т-ва, съ 1-го апрѣля с.г. для обмѣна имѣющихся у нихъ временныхъ паевыхъ квитанцій на вполнѣ оплаченныя —пай—квитанціи.
Пріемъ и выдача квитанцій ежедневно отъ 10 до 1 часа дня.
4—4

ԹԻՖԼԻՍԻ ԸՄԵԻՏՏԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐՆԸ
Գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ: Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դատակարգից: Դասընթացը եռամսյակ է: Առաջին դասարանը ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարած աշակերտները (1872 թվ. կանոնադրութեան համաձայն): Ուսման վարձը տարեկան 80 ռուբլի է:
Դասընթացը աւարտողների իրաւունքները.—անձնական պատուաւոր քաղաքացու կոչում հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ: Պետական ծառայութեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունքը, առանց քննութեան: Չորհրդաւորութեան մէջ՝ երկրորդ կարգի արտօնութիւններ:
Ուսումնարանը կը բացվի 1902 թվ. սեպտեմբերի 17-ին: Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին: Ուսումնարանի բնակարանը—Նիկոլայեւսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեւի:
Խնդիրները.—մտորիկական, կոչման եւ ծաղկի պատուաւորական վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի 1-ը:
Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի ղեկավարը:
1—1

СОМАТОЗА БЫЛКОВИНА МЯСА.
Выдающеея укрепляющее средство.
ПРОДАЕТСЯ ВЪ АПТЕКАХЪ И АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.